ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ԵԼԱԿ	ՄՈՐԻ	ՄՈՇ
ՀԱՂԱՐՋ	ԸՆԿՈՒՅԶ	ՆՈՒՌ

ԵԼԱԿ

Ելակը առողջարար և բավականին համեղ հատապտուղ է, որը սիրված է ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների կողմից: Ելակը մշակվում է Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր մարզերում:

Բուսաբանական տեսանկյունից ելնելով՝ ելակը պատկանում է վարդազգիների ընտանիքին: Այսօր մեզ հանդիպող ելակները չիլիական և հյուսիսամերիկյան ելակի խաչասերման արդյունք են համարվում:

Ելակները ազմամյա բույսեր են: Գոյություն ունեն ելակի մոտավորապես 20 տեսակներ: Ունեն հինգ թփանի սովորական ծաղիկներ, հիմնականում սպիտակ երանգով:

Ելակի պտուղները պարունակում են մարդու օրգանիզմի համար կենսաանհրաժեշտ նյութեր, ինչպիսիք են՝

շաքարներ	8-11%
օրգանական թթուներ	1-1,5%
վիտամին	A, C
երկաթի հանքային աղեր	
ֆոսֆոր, կալիում, կալցիում	
արոմատիկ նյութեր	

Մաքսիմալ բերք ստանալու համար ելակի արմատները չպետք է լինեն 3 տարեկանից ավելի: Բույսի արմատների ծերացման հետ մեկտեղ նվազում է հատապտղի աճը, բերքը, ինչպես նաև չափերը:

Ընտրության հարցում կարևոր է ելակի առողջ և եռանդուն սածիլներ ընտրելը: Այն պետք է ունենա առողջ ծաղիկ և ամենաքիչը 3 առողջ, լրիվ զարգացած տերևներ: Կարևոր է նաև արմտիքի առկայությունը:

Ելակի մշակման հիմնական ժամանակահատվածը

Ելակի մշակման համար հիմնականում ամենալավ ժամանակահատվածը սկսվում է հուլիսի կեսերից և ավարտվում օգոստոսի վերջին: Քանի որ այդ ընթացքում օրերը տաք են, հաճելի և բույսերի համար բարենպաստ պայմաններ լավ են աճի համար:

Բույսերը ձմեռում են չոր ծղոտի կամ կուտակված հողածածկի տակ և առաջին պտուղները տալիս են դրան հաջորդող ամռանը:

Գտնվելու վայրը և հողաթմբի ձևավորումը

Ելակը հիմնականում աճում է հատկապես շատ արևոտ վայրերում և փխրուն, հումուսով հարուստ հողերում: Տվյալ տարածքը ինչքան շատ արև է ստանում, այնքան ավելի քաղցր և համեղ է լինում պտուղը: Տարածքը պետք է քամուց պաշտպանված լինի, բայց որոշակի քամու առկայություն անհրաժեշտ է, քանի որ անձրևային տեղումներից հետո ինչքան հնարավոր է բույսի սաղարթը պետք է արագ չորանա որպեսզի հիվանդություններ չառաջանան:

Խոնավ հողի առկայության դեպքում բույսի մոտ կարող է միանգամից արմատային հիվանդություններ առաջանալ: Այդ պատճառով անհրաժեշտ է հողը փխրեցնել կա՛մ համապատասխան մշակմամբ, կա՛մ կանաչ գոմաղբի օգնությամբ, կա՛մ ելակը աճեցնել նեղ, մոտավորապես 20սմ բարձրությամբ մարգաթումբերով փխրուն ավազի և հումուսի խառնուրդով: Մշակումից հետո ելակը իր բերքատվությամբ հիմնականում աչքի է ընկնում մշակման երկրորդ և երրորդ տարում: Դրանից հետո պետք է մարգաթումբը փոխել և փոխարինել այն նոր երիտասարդ սածիլներով:

Լավ բերքատվության համար հիմք է հանդիսանում հողի ճիշտ մշակումը.

- անհրաժեշտ է հողը խորը փորել եղանի միջոցով
- յուրաքանչյուր մ²-ի համար ավելացնել 4-5լ հումուս կամ փտած տերևներից առաջացած պարարտանյութ:

Ինչպե՞ս պաշտպանել ելակը հիվանդություններից և վնասատուներից

Հողային վնասատուների առկայությունից խուսափելու համար պետք է հատկապես ուշադրություն դարձնել, որ հողաթմբում առնվազն 4 տարի ելակ չաճեցվի: Հողային վնասատուների վառ օրինակ են համարվում կլոր որդերը: Ծեր և հիվանդ տերևները պետք է հողաթմբի մշակման ժամանակ անպայման կտրել մկրատով, քանի որ կարող է առաջանալ օրինակ մոխրագույն բորբոս հիվանդությունը: Բույսի տերևները չպետք է պոկելէ դրանից կարող է բույսը վնասվել:

Ելակի լվիճների, տերևակեր վնասատուների, սղոցոների դեմ պայքարելու համար տնկարկները պետք է սրսկել ֆուֆանոնի 0,15% կամ ֆոսբեցիդի 0,06% էմուլսիայով: Իսկ ելակի տերևների սպիտակ և գորշ բծավորության դեմ պայքարելու համար անհրաժեշտ է սրսկել 1% բորդոյան հողուկ:

Ինչպե՞ս ճիշտ տնկել ելակը

Հողաթումբի մշակումից 2 շաբաթ հետո կարելի է արդեն ելակները տնկել: Շարքերի միջև հեռավորությունը պետք է լինի ամենաքիչը 60սմ, որպեսզի հնարավոր լինի պտուղները հանգիստ հավաքել: Բույսը պետք է այնքան խորը տնկել, որ կենտրոնական հատվածը մնա մակերեսի կենտրոնում: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել, որ արմատը տեղադրվի ուղղահայաց և լավ դիրք ունենա հողում: Այն չպետք է թեքված վիճակում լինի: Տնկելուց հետո երիտասարդ ելակները խոնավության կարիք ունեն: Անհրաժեշտության դեպքում պետք է այն առատ ջրել: Բացի դրանից պետք է միշտ հետևողական լինել և տարածքը մաքրել մոլախոտերից: Արմատները չվնասելու համար պետք է կանոնավոր կերպով աշխատել բրիչով:

Որպեսզի ելակները լավ ձմեռեն և հաջորդ տարի ինեն բերքատու, անհրաժեշտ է ուշ աշնանը նորից պարարտացնել:



- գնելուց անմիջապես հետո բույսը տնկել
- սածիլները դնել ջրի մեջ, որպեսզի այն լավ ներծծվի
- մշակել պարարտանյութով
- շատ խիտ չտնկել
- շարքերի հեռավորությունը 60սմ
- շարքում բույսերի հեռավորությունը 30սմ
- արմատները չճզմել
- լավ ջրել
- նպատակահարմար է ջրել առավոտյան և երեկոյան
- տարածքը մաքրել մոլախոտերից և կանոնավոր կերպով հողաթումբը փխրեցնել

Ապացուցված է, որ ելակի պտուղները օգնում են երիկամի և լյարդի մաքրմանը, համարվում են նաև միզամուղ: Վայրի ելակի տերևներից պատրաստված թեյը օգտակար է փորլուծության դեպքում: Այն կարելի է օգտագործել թարմ և

վերամշակված վիճակում: Ելակից սովորաբար պատրաստում են մուրաբաներ, ջեմեր, պովիդլո, ինչպես նաև ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ:

ԱԶՆՎԱՄՈՐԻ

Ազնվամորին դասվում է ամենահամեղ հատապտուղների շարքին, որը կարելի է այգում մշակել: Ազնվամորու մշակումը այդքան էլ բարդ չէ, և բույսը մեծ խնամք չի պահանջում: Չնայած որ ոչ բոլոր այգիներում կարելի է հանդիպել ազնվամորու թփեր: Նրանք այդքան էլ հայտնի չեն, այդ պատճառով նրանց կարելի է հիմնականում այգու մեկուսի անկյուններում տեսնել: Ազնվամորին տարածված է Գուգարքի, Ստեփանավանի, Դիլիջանի, Իջևանի, Նոյեմբերյանի և այլ շրջանների անտառներում: Հիմնականում աճում է թփուտներում, անտառներում, բացատներում, քարքարոտ վայրերում:

- ազնվամորին պետք է տնկել արևոտ տեղերում
- կիսաստվերոտ կամ լրիվ արևոտ տարածքը իդեալական է նրա համար
- նպաստավոր է, երբ տարածքում կա քամու առկայություն
- կլիմայի նկատմամբ բույսը դիմացկուն է

Ազնվամորի մշակելը այդքան էլ բարդ գործընթաց չէ: Հիմնականում կարևոր է հողի նախապատրաստական աշխատանքները, հաճախ օգտագործում են տարբեր շրջանակներ ազնվամորու յուրաքանչյուր սորտերի համար:

Այսպիսով՝ անհրաժեշտ է

- արմատային տարածքը խորը փխրեցնել
- խուսափել թանձրացումից
- տարածքը մաքրել մոլախոտերից
- մշակել շարքերով
- շարքերի միջև հեռավորությունը 1,25-1,50սմ
- բույսերի միջև հեռավորությունը 40-50սմ
- կտրատել երկար և վնասված արմատները
- կարճացնել ճյուղերը 30-50սմ
- բույսը լավ ջրել, մոտ 2-3 ժամ թողնել ջրի մեջ
- ցանկապատին մոտ տնկելու դեպքում անպայման տարածություն պահել
- 10 տարի օգտագործվող ազնվամորու թփերը փոխարինել նորերով

Ազնվամորու ճիշտ ջրում և պարարտացումը

հողը միշտ պետք է խոնավ լինի

հատկապես նոր տնկած ազնվամորու արմատները պետք է ամեն օր ջրել մինչև բույսի լրիվ աճելը, դրանից հետո շաբաթվա ընթացքում մեկանգամյա ջրումը բավական է

պետք է օգտագործել քլորիդ չպարունակող պարարտանյութեր, յուրաքանչյուր մ² տարածքի համար օգտագործել 50գ պարարտանյութ

տարեկան 2 անգամ պարարտացնել. ապրիլին՝ բերքատվության լավացման համար, իսկ հունիսին՝ ծաղիկի աճի բարելավման համար

Ինչպե՞ս ճիշտ էտել ազնավամորին

Ազնվամորին էտելիս հատկապես կարևոր է չվնասել բույսի ճյուղերը: Բույսը վնասվելու դեպքում կարող է հողի մեջ հիվանդության հարուցիչներ ներթափանցել:

- նախապես պետք է հատել թուլացած ճյուղերը
- ճյուղերը պետք է կտրատել ժամանակին, քանի դեռ նրանց բարձրությունը չի հասել 20-30սմ
- որքան հնարավոր է բույսը կտրել խորը
- հին ճյուղերը հաճախ վարակի աղբյուր են հանդիսանում հիվանդության հարուցիչների համար
- աշնանային ազնվամորու արմատները խորը կտրել՝ մակերևույթին թողնելով միայն 3սմ

Աշնանային ազնվամորու ցողունները բերքատվությունից անմիջապես հետո կամ վաղ գարնանը պետք է մինչև մակերևույթային մակարդակը կտրատել:

Ազնվամորին ցրտադիմացկուն է: Այն դիմանում է ցանկացած եղանակային պայմանների առանց որևէ պաշտպանական միջոցների:

Ինչպե՞ս բազմացնել ազնավամորին

Ընդհանրապես շատ պարզ է ազնվամորու բազմացումը: Այն կարելի է կատարել մի շարք եղանակների օգնությամբ.

վեգետատիվ բազմացում ընձյուղի միջոցով

բույսի հողի մեջ իջեցման միջոցով

բազմացում սերմերի միջոցով

Բազմացում ընձյուղի միջոցով

Նոր ցողուն ստանալու համար լավագույն միջոց է հանդիսանում ընձյուղի միջոցով բազմացման մեթոդը: 20-30սմ ընձյուղները երևան են գալիս մայր ցողունի կես մետր հեռացնելուց հետո: Աշնանը՝ տերևաթափից հետո, բահով կարելի է պարզապես կտրել և տնկել մեկ այլ վայրում: Բազմացման այս եղանակը հնարավոր է նաև գարնանը: Ամեն դեպքում նախապատվությունը տրվում է ընձյուղը աշնանը կտրել, քանի որ այն արմատակալվում է և արդեն հաջորդ տարի սկսում է եռանդուն աճել:



Բազմացում ցողունի իջեցման միջոցով

Յուրաքանչյուր ցողունի իջեցումը հողի մեջ շատ բույսերի մոտ փորձված բազմացման միջոց է հանդիսանում, այդ մեթոդը կիրառելի է նաև ազնավամորու դեպքում: Այս մեթոդը հնարավոր է կիրառել ամբողջ տարվա ընթացում: Անհրաժեշտ է առանձին ցողունները աղեղնաձև իջեցնել հողի մեջ և մի փոքր հատված ծածկել հողով: Երբ ցողունը տերևակալվում է, պետք է դրանք նախապես համապատասխան մակերեսում հատել, այլապես հողի հետ շփման արդյունքում կարող է շատ հեշտությամբ վարակներ առաջանալ: Հողի մեջ իջեցված ցողունը արմատակալվում է հողում: Այն կարելի է աշնանը կամ գարնանը արմատակալման դեպքում կտրել և ցանկացած վայրում վերատնկել:

Աշնանային ազնվամորու ցողունները բերքատվությունից անմիջապես հետո կամ վաղ գարնանը պետք է մինչև մակերևույթային մակարդակը կտրատել:

Ազնվամորու հիվանդություններ



Եթե ազնվամորու համար ընդհանուր տարածքը իդեալական չէ և շատ խոնավ, ապա կարող են հաճախ տարբեր հիվանդություններ առաջանալ, հիմնակա-նում՝ վարակային հիվանդություններ: Երկուսն էլ կարելի է կանխել դիմացկուն սորտեր ընտրելու դեպքում:

- ***կարմիր արմատային հիվանդություն*** – այս հիվանդության հետևանքով կարող է ամբողջ ազնվամորու թփերը վերանալ:
- ***ցողունային հիվանդություն*** – կապույտ-մանուշակագույն բծեր, որոնք շատ արագ են տարածվում: Նրանք պտուղ չեն տալիս: Այս հիվանդությունը կանխելու համար չպետք է շատ ցողունների առկայություն: Վնասված ցողունները նպաստում են հիվանդությունների առաջացմանը:
- ***դեղին տերևները*** վկայում են մագնեզիումի պակասի մասին: Դրա դեմ օգնում է հատկապես մագնեզիում պարունակող պարարտանյութը:

Վիտամիններ և հանքանյութեր

Ազնվամորին հարուստ է այնպիսի վիտամիններով և հանքային նյութերով, ինչպիսիք են՝ վիտամին A, B, C, կալիում, կալցիում, ֆոսֆոր, մագնեզիում:

Ստորև ներկայացվում է 100գ ազնվամորու մեջ պարունակվող վիտամինների և հանքանյութերի քանակությունը:

ՎԻՏԱՄԻՆՆԵՐ	100գ-ի համար
Վիտամին C	25մգ
Վիտամին A	0մգ
Վիտամին E	0,91մգ
Վիտամին B1	0,02մգ
Վիտամին B2	0,05մգ
Վիտամին B6	0,08մգ

ՀԱՆՔԱՆՅՈՒԹԵՐ	100գ-ի համար
Նատրիում	1,3մգ
Երկաթ	1մգ
Ցինկ	0,4մգ
Մագնեզիում	30մգ

Բույսի պտուղները հիմնականում օգտագործում են բուժման նպատակով: Պտուղները հավաքվում են լրիվ հասունանալուց հետո: Ազնվամորու պտուղները օգտագործում են թարմ վիճակում: Նրանցից ստացվում է բարձրորակ մուրաբա, կոմպոտ, օշարակ, մարմելադ, կիսել, կվաս: Պտուղները լայնորեն օգտագործվում են նաև հրուշակեղենի, լիկյորի, օղու արտադրության մեջ:

ՄՈՇ

Մոշենին պատկանում է վարդազգիների ընտանիքին, ցեղակից է ազնվամորուն, քարամոշին և ճահճամոշին: Այն տարածված է Սյունիքի, Տավուշի և Լոռու մարզերում: Աճում է թփուտներում, գետերի, առուների, ջրանցքների ափերին, անտառների և ճանապարհների եզրերին: Ծաղիկները սպիտակ են, ծաղկման ժամանակաշրջանը երկարատև է և ծաղկում է անհավասարաչափ:

- մոշը տարածվող հատապտուղ է
- բարձրությունը հասնում է 50սմ-ից մինչև 300սմ
- ծաղկման շրջանը հունիս-օգոստոս
- յուրաքանչյուր ցողունի վրա ունի առանձին ծաղիկներ
- պտղի գույնը կապույտ-սև համադրությամբ
- կան փշավոր և անփուշ սորտեր
- կարելի է տարբերել փաթաթվող և ուղիղ աճող սորտեր
- կիրառելի են ինչպես հատապտուղները, այնպես էլ տերևները

Մոշենին պարունակում է՝

ջուր	88%
սպիտակուց	1,4%
ճարպ	0,5%
օրգանական թթու	2,3%
նիացին	1,6մգ
վիտամին K	0,4մգ
վիտամին A	0,3մգ
վիտամին C	5մգ
վիտամին E	1մգ

Ինչպե՞ս ընտրել մոշենու համար ճիշտ վայր

Մոշենու մշակման համար իդեալական վայր է համարվում սառը քամուց պաշտպանված և չափավոր արևոտ տարածքը: Կիսաստվերոտ վայրը նույնպես կիրառելի է: Չափից շատ արևը, ինչպես նաև շատ ստվերոտ տարածքը օգտակար չէ մոշենու մշակման համար: Պատշգամբում մոշենի աճեցնելու համար անհրաժեշտ է բույսը ուղղել դեպի արևելք և արևմուտք: Օգտակար կարող են լինել նաև դիրքը դեպի հարավ, միայն ծածկի առկայության դեպքում:

- մոշենու համար նպաստավոր են արևոտ մինչև անգամ կիսաստվերոտ վայրեր
- նրանք պետք է ցրտից և քամուց պաշտպանված լինեն
- ինչքան շատ է արևը, այնքան ավելի համեղ է պտուղը
- տան ամենալավ տեղակայման վայրն է համարվում հարավային մասը
- հողը պետք է ջրանցիկ, ինչպես նաև կիրով և ազոտով հարուստ լինի

Ջրում և պարարտացում

Մոշենին սիրում է թեթևակի խոնավ հողատարածք: Տևական չորության դեպքում անհրաժեշտ է հաճախակի ջրել այն: Սովորական եղանակային պայմանների դեպքում չպետք է լրացուցիչ ջրել: Իսկ ամանի մեջ տնկված մոշենու դեպքում պետք է հաճախ ջրել, հնարավորության դեպքում միայն անձրևաջրով: Հողատարածքը անհրաժեշտ է պարարտացնել տարվա ընթացքում միայն մեկ անգամ՝ պարարտացնելով հատուկ պարարտանյութի կամ գոմաղբի միջոցով:

Մոշենու մշակման դեպքում ջրումը շատ կարևոր է: Բույսերը, որոնք բավականաչափ ջրային պաշար են ստանում, ամռանը և աշնանը բավականաչափ և մեծ չափերի

մրգեր են տալիս: Խորհուրդ է տրվում բույսերը թեթևակի խոնավ հողատարածքում պահել:

Մոշենու էտում

Մոշենու թփերը պետք է կանոնավոր կերպով կտրատել, այլապես նրանք կվայրիանան և պտղատվությունը կվատանա: Գարնանը սովորաբար կտրատում են ծեր ճյուղերը մինչև խոր արմատը: Նոր աճած ճյուղերից թողնում են 4-5 ճյուղ, այնպես որ մնացած ճյուղերը կարողանան բավականաչափ լույս ստանալ:

Մոշենին վաղ շրջանում կտրատելու դեպքում կարող է բույսի մոտ սառչելու վտանգ առաջացնել:

Մոշենու կտրատումը շատ պարզ է, բայց այն կախված է ընտրված սորտի տեսակից: Ամեն դեպքում այն պետք է իրականցվի մաքուր և սուր գործիքների օգնությամբ, մոշենուն հասցվող վնասներից խուսափելու համար:



Ուղիղ աճող մոշենու կտրատում



Ուղիղ աճող սորտի դեպքում կտրատումը իրականացվում է գարնանը՝ ամենաուշը ապրիլ ամսին: Երիտասարդ ճյուղերի դեպքում հեռացվում է միայն գագաթային հատվածը: Կտրատման այս ձևը մոշենուն տալիս է խիտ աճ, ինչը հետագայում առատ բերք է ապահովում:

Փաթաթվող մոշենու կտրտում

Մոշենու մշակման համար փաթաթվող սորտեր կիրառելու դեպքում պետք է դրանք երկու անգամ կտրատել կարճ ժամկետում: Առաջինը իրականացվում է ամռանը, երբ մոշը դեռ խակ է, սակայն արդեն տեսանելի: Տվյալ դեպքում բոլոր բեղիկները հնարավարինս մինչև հատակը կտրատվում են, որոնք բերք չեն տալիս: Բեղիկների կտրատումից հետո մոշենու թուփը սկսում է շատ լավ աճել:



Մոշենու կտրատման երկրորդ շրջանն իրականացվում է բերքահավաքից անմիջապես հետո, այսինքն՝ ուշ աշնանը: Սովորաբար կտրատման ճիշտ ժամանակահատվածը համարվում է օգոստոսի վերջը: Այդ ընթացքում մի փոքր կտրատվում են պտղատու բեղիկները: Ընդհանուր թփուտի մեկ երրորդը պետք է մաքսիմալ կտրտվի:

Բազմացման մեթոդներ

բազմացումը սերմերի միջոցով

Մոշենու բազմացումը սերմերի միջոցով բավականին բարդ է, քանի որ բազմացումը մինչև բողբոջում կարող է երկու տարի տևել: Հազվադեպ դեպքերում տևում է 4-6 շաբաթ: Սերմեր ստանալու համար պետք է մի

քանի ամսվա համար սառեցման-խոնավ մշակման ենթարկել: Դրա համար պտուղները թողնում են ջրում 5 ամիս ներծծվել, այնուհետև խմորվել: Տնկում են այն հատուկ տարրաների մեջ և դնում զով սենյակում: Այն պետք է հավասարաչափ խոնավ մնա և չչորանա:շ Առաջին բողբոջները երևալուն պես պետք է տեղափոխել սենյակային ջերմաստիճանին համապատասխան տաք վայր: Չորս շաբաթ անց բողբոջները այնքան կմեծանան, որ կարող են փոքրիկ ամանների մեջ առանձին տնկվել: Սկսած 20սմ բարձրության հասնելուց երիտասարդ բույսերը կարող են այգում կամ հատուկ ամանների մեջ տնկվել:

բազմացումը տնկիների միջոցով

Ավելի արագ է տեղի ունենում տնկիների միջոցով բազմացումը: Տնկիները պետք է ունենան 5-10սմ երկարություն և առնվանզն 2-3 բողբոջ: Այն տեղադրում են հողի մեջ և պահպանում խոնավություն: Քանի որ տնկիները ջերմության և օդի խոնավության կարիք ունեն, պետք է ամանները կիսաթափանցիկ պոլիէթիլենային տոպրակով ծածկել կամ տեղափոխել ջերմոց: Մինչև արմատակալվելը որպես կանոն տևում է 3-4 շաբաթ, ինչը կարելի է թարմ տերևների կազմը ճանաչել: Որպեսզի բույսը դանդաղ ընտելանա նոր շրջապատի պայմաններին, հանում են պոլիէթիլենային տոպրակը: Երիտասարդ բույսերը ջրում են, եթե պոլիէթիլենային տոպրակը արդեն հանված է, կարող են տնկիները մեծ ամանների մեջ տնկվել և դանդաղորեն դրսի կլիմային հարմարվել: Ամռանը նրանց կարելի է հանգիստ դրսում թողնել, իսկ աշնանը կարելի է բույսերը այգում՝ իրենց վերջնական հատվածում տնկել

Բնորոշ հիվանդությունները և վնասատուները

Ամենաշատ տարածված վնասատուների թվին կարելի է դասել՝

1. տերևի ոջիլ

2. տիզ

3. ժանգ

4.բորբոս

Այս բոլոր նշված հարուցիչների և վնասատուների դեմ որպեսզի ժամանակին կարողանան պայքարել, պետք է բույսերը ամեն դեպքում կանոնավոր կերպով հետազոտել: Չափից շատ տերևների կորուստը, չհասունացող հատապտուղ-ները, տերևների գունաթափումը, սնկային հիվանդությունների առկայությունը, ինչպես նաև դեֆորմացիաները վկայում են հատապտղի հիվանդության մասին, որոնց դեպքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել և համապատասխան միջոցների օգնությամբ բուժել հատապտուղը:

Մոշը համարվում է իդեալական հատապտուղ, քանի որ հատապտուղները հասունանում են հուլիսի վերջից սկսած և սորտի տեսակից կախված. կարող են 6 կամ 8 շաբաթ շարունակ ամեն օր բերք տալ և անմիջապես սպառվել

ՀԱՂԱՐՋ

Հաղարջենին համարվում է կոկռոշազգիների ընտանիքի ներկայացուցիչ: Հայաստանում հանդիպում է վայրի տեսակը՝ հիմանակում Եղեգնաձորի, Ախուրյանի, Արթիկի, Սևանի ավազանի, Զանգեզուրի, Լոռու, Շիրակի տարածքներում: Հաղարջենին տարածված է անտառներում, թփուտներում, ժայռաճեղ-քերում, կիրճերում: Իսկ սովորական հաղարջենին աճեցվում է գրեթե բոլոր մարզերում: Մշակվում են հիմանկանում սև և կարմիր հաղարջենիների ներմուծված տեսակներ: Հաղարջենու Ախուրյանի և հայկական տեսակները բնաշխարհիկ են. գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Սև և կարմիր հաղարջները տարբերվում են իրենց համային տեսակներով, չնայած որ բուսաբանական տեսանկյունից նրանք իրար շատ մոտ են և նրանց խնամելու ձևերը կարելի է համատեղել.

- Հաղարջենիները պետք է արևոտ հողատարածքներում տնկել, հումուսով հարուստ վայրերում և հնարավորինս հավասարաչափ կիսախոնավ հողերում:

- Եթե արևոտ հողատարածքները նախօրոք զբաղված են, կարելի է նաև հաղարջենիները ստվերոտ մասերում տնկել, սակայն պտուղները քաղցր համ չեն ունենա:

- Հաղարջենիները տնկելիս պետք է այնքան խորը տեղադրել հողի մեջ, որ նրա արմատները գտնվել մոտավորապես 5սմ հողի մեջ, այսպես բույսը պաշտպանված կլինի սառելուց:

- Կարմիր հաղարջենու դեպքում թփերի միջև հեռավորությունը պետք է լինի 1,5-ից մինչև 2մ, իսկ սև հաղարջենու դեպքում՝ նույնիսկ 2,5մ:

- Ինչքան մեծ է լինում տարածությունը, այնքան ավելի հեշտ է հետագայում թփերի կտրտումը:

- Հաղարջենու տնկման ամենալավ ժամանակահատվածը համարվում է վաղ աշունը կամ վաղ գարունը:

- Հաղարջենին կարելի է դասել առողջ և պարզապես հեշտ մշակվող թփերի շարքին:

- Ամեն դեպքում պետք է ուշադրություն դարձնել հաղարջենու բավականաչափ ջրելուն:

- Տարբեր սորտերի հաղարջենիներ իրար կողք տնկելիս ծաղիկների մոտ արագ փոշոտում տեղի կունենա:

Բերքատվությունից հետո ինչպե՞ս ճիշտ էտել հաղարջենու թուփը

Կարմիր և սպիտակ հաղարջենին առատ բերքատվությամբ աչքի է ընկնում աճեցման երկրորդ և չորրորդ տարում: Չորրորդ տարուց արդեն բերքատվությունը սկսում է նվազել: Բերքատվությունից հետո ամեն տարի անհրաժեշտ է երկրորդ և երրորդ հիմանական ճյուղերը կտրատել: Կարևոր է այն հանգամանքը, որ ճյուղերը և մնացած կտորներն ամբողջությամբ հեռացվեն: Քանի որ պտղատու ճյուղերը շատ ամուր են, կտրատելիս պետք է հատուկ մկրատ կամ ծառի սղոց օգտագործել, ճյուղերը չվնասելու համար:



Ինչպես ճիշտ տնկել և բազմացնել հաղարջենու թփերը

Քայլ 1

Հաղարջենին տնկում են բավականին խորը: Այդ պատճառով խորհուրդ է տրվում բույսի կտրատումն իրականացնել նախքան թփի հողի մեջ ամրապնդվելը: Նախապես պետք է հավելված կետից կտրատել բոլոր թույլ և վնասված ճյուղերը:

Քայլ 2

Մնացած ճյուղերը կտրատել մինչև սկզբնական երկարության մաքսիմալ կեսը:

Քայլ 3

Բույսը տնկելու համար ընտրել այգու արևոտ, բայց ոչ չոր վայր: Չնայած հաղարջենին աճում է նաև կիսաստվերոտ վայրերում:

Քայլ 4

Արմատների փունջը պետք է հանել հատուկ տարրայից: Անհրաժեշտության դեպքում պետք է փխրեցնել կողային մակերեսը և մատների օգնությամբ փափկեցնել ներքևի հատվածը:

Քայլ 5

Արմատային հատվածը պետք է այնքան խորը տեղադրել հողի մեջ, որ մակերևույթը ամենաքիչը երեք մատ խորությամբ հիմքի մակարդակում գտնվի: Խորը արմատների միջոցով առողջ թփերը հիմնական թփերի հիմքի վրա կազմում են բուն արմատային հատվածը:

Քայլ 6

Հաղարջենու թուփը տնկելուց հետո պետք է հողը ոտքերով ամուր սեղմել և բույսի շուրջ բոլորը ձևավորել ջրելու համար:

Քայլ 7

Տնկումից հետո անհրաժեշտ է ջրել. խոնավություն սիրող հաղարջենին մոտավորապես 10լ ջրով:

Քայլ 8

Ջրելուց հետո խորհուրդ է տրվում ավելացնել օրգանական պարարտանյութ կամ գոմաղբ: Այն պահպանում է խոնավություն և կրճատում է հողում ջրի գոլորշիացումը: Պարարտացնելիս ապահովվում է ար և ծաղկում:

Հաղարջենին կարելի է օգտագործել թարմ և վերամշակված վիճակներում: Կարմիր և սև հաղարջենուց կարելի է պատրաստել մուրաբա, ջեմ, հյութ, կոմպոտ և այլն:

ՆՈՒՌ

Նուռը պատկանում է նռնազգիների ընտանիքին: Բնի բարձրությունը կազմում է 5մ: Տերևները կաշեկերպ են և փայլուն: Այն վայրի ձևով հանդիպում է Փոքր և Միջին Ասիայում, Անդրկովկասում, Իրանում, Աֆղաստանում: Հայաստանում նռնենին հանդիպում է վայրի վիճակում Սյունիքի (Գորիս, Մեղրի) և Լոռու (Ալավերդի, Ախթալա) շրջաններում: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Նուռը հազարավոր տարիներ շարունակ համարվել է որպես օգտակար և դեկորատիվ բույս: Նռան հյութը պարունակում է 8-19% շաքարներ, C վիտամին:

Գտնվելու վայրը

Նռնենին շատ է սիրում արև, ջերմություն և շատ խոնավություն: Ինչքան տարիքով է բույսը, այնքան ավելի շատ արևի կարիք ունի: Որպեսզի նռնենին կարողանա լավ և առողջ աճել, խորհուրդ է տրվում ծառը արևոտ վայրերում տնկել:

- նռնենու համար իդեալական է քամուց պաշտպանված վայրը
- այն ծաղկում է նաև կիսաստվերոտ վայրերում
- հողը պետք է լինի փխրուն և ջրանցիկ
- լավ է աճում նաև ավազոտ հողերում
- այն պետք է բավականին խորը տնկել

Ջրում և պարարտացում

Նռնենին հարկավոր է ջրել կանոնավոր կերպով: Պետք է հատկապես ուշադրություն դարձնել, որ ծառի ամենացածր արմատները ջրով հագենան:

- կանոնավոր կերպով ջրել աճման շրջանում
- ջրումը պետք է լինի նորմալ քանակությամբ, ճահճացումից խուսափելու համար
- ջրել միայն այն դեպքում, երբ հողի վերևին շերտը չոր է

- երբ նռնենու աճման շրջանում տերևները թափվում են, դա վկայում է ջրի բացակայության մասին
- կուտակված ջուրը հեռացնել

Վեգետացիայի շրջանում նռնենին հարկավոր է պարարտացնել: Պարարտացումը կատարել երկու կամ չորս շաբաթը մեկ: Որպես հավելում օգտագործվում է նաև ֆոսֆոր պարունակող հեղուկ պարարտանյութ:

Ձմեռում



Նռնենու տեսակների մեծ մասը զգայուն է սառնամանիքի նկատմամբ: Ցածր ջերմասիտճանի պայմաններում բույսի մոտ զարգանում է պաշտպանողական մեխանիզմ: Ծառը ազատվում է տերևներից և կատարում նյութափոխանակություն: Ինչպես շատ ուրիշ ցրտադիմացկուն ծառեր, կան նռնենու տարբեր սորտեր, որոնք իսկապես կարող են սառնամանիքին՝ նույնիսկ -10° ցրտին դիմակայել:

Էտում և բազմացում

Բերքահավաքից հետո անհրաժեշտ է

1/ կտրատել թույլ ճյուղերը

2/ կարճացնել շատ երկար ճյուղերը

3/ կտրատել երիտասարդ ճյուղերը 1/3 չափով

Նռնենին կարելի է բազմացնել երկու ճանապարհով՝ տնկիների և սերմերի միջոցով

Բազմացումը սերմերի միջոցով

- նոնենու միջուկը բաժանել և մաքրել
- միջուկը երկու օր թողնել մեկ բաժակ տաք ջրում այնուհետև տնկել հողի մեջ
- հողը նախապես խոնավեցնել
- ջերմաստիճանը չպետք է լինի 20°C-ից ցածր
- երկու կամ երեք ամիս հետո արդեն տեսանելի են դառնում առաջին ծիլերը
- մեծանալուց հետո փոքրիկ բույսերը առանձնացնել
- ընտրել լուսավոր վայր տնկելու համար
- ուժեղ արևի առկայությունը ցանկալի չէ

Բազմացումը տնկիների միջոցով

- տնկելու ամենալավ շրջանն է համարվում փետրվար կամ մարտ ամիսները
- տերևազուրկ ճյուղերը չպետք է փափուկ լինեն
- երկարությունը պետք է լինի 10-20սմ
- անհրաժեշտ է տնկել փխրուն, խոնավ հողում
- հեշտ է արմատակալվում և արագ ընտելանում շրջակայքի միջավայրին 20-25°C ջերմաստիճանի և բարձր խոնավության դեպքում
- չորս շաբաթ հետո արդեն արմատակալվում է
- բույսը տնկել փոքրիկ ամանի մեջ և ընտրել 16°C -ին համապատասխան վայր
- բույսը հաճախակի կտրատել, որպեսզի այն սկսի լավ ճյուղավորվել

Հիվանդություններ, վնասատուներ

Նոնենին այդքան էլ զգայուն չէ վնասատուների և հիվանդությունների նկատմամբ: Եթե բույսը աճեցվում է այգում կամ ջերմոցում, ամեն դեպքում այն կարող է սպիտակ ճանճի զոհը դառնալ:

- եթե ծաղիկները բացակայում են, պատճառ կարող է հանդիսանալ չափից շատ ջրումը և պարարտացումը, կամ էլ բարձր ջերմաստիճանային պայմանները
- եթե ձմեռանոցը շատ տաք է՝ առաջանում է տերևի ոջիլներ
- ոջիլներից կարելի է ազատվել տերևները ջրով լվանալուց հետո

Նռան ծաղիկներից ստացված ներկն օգտագործում են բնական գործվածքների ներկանյութերի մեջ: Պտուղն օգտագործում են թարմ և վերամշակված վիճակում, օրինակ դոշաբ, գինի, հյութ պատրաստելիս: Պետք է հավաքել հասուն վիճակում, քանի որ պահելով չի հասունանում:

ԸՆԿՈՒՅԶ

Ընկուզենու իրական տարածման շրջանը ձգվում է Փոքր Ասիայից մինչև Հունաստան: Գոյություն ունի ընկուզենու 7-9 տեսակ: Հայաստանում այն հանդիպում է Տավուշի, Լոռու, Արարատի, Սյունիքի և այլ մարզերում, աճում է քարքարոտ տաք լանջերին, այգիներում և այլուր: Սովորական ընկուզենին գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Ընկուզենին

- երկարակյաց է. ապրում է 300-400 տարի
- լավ աճում է չափավոր խոնավ հողերում
- լուսասեր և ջերմասեր է
- դիմանում է մինչև -25°C ցրտին
- կարող է տալ 65-100 և ավելի՝ մինչև 250կգ բերք

Սերմը և միջուկը պարունակում են

- 45-72% ճարպեր
- 8-21% սպիտակուցներ
- վիտամիններ
- մետաղական միացություններ

Գտնվելու վայրը

Ընկուզենին կարիք ունի արևոտ, տաք տարածքի, որը պետք է հնարավորինս քամու առկայությամբ ուղեկցվի: Լավ աճում է տևական մեղմ վայրերում, ինչպես օրինակ խաղողագործության շրջաններում: Հողը պետք է հնարավորինս հումուսով հարուստ և փխրուն լինի, քանի որ ընկուզենին ուղղահայաց արտահայտված արմատներ ունի:

Տնկումը և խնամքը

Ընկուզենի տնկելու դեպքում անհրաժեշտ է բավականին հողատարածք տրամադրել նրա աճի և զարգացման համար: Այն ունի մինչև 30մ բարձրություն և գագաթի շառավիղը կազմում է մինչև 15մ: Ծառի բնի տրամագիծը կարող է մինչև 2մ-ի հասնել: Ամեն դեպքում կան նաև տարբեր սորտեր, որոնք բնորոշ են նաև փոքրիկ այգիներին: Համեմատաբար թույլ աճող ընկուզենիների գագաթի տրամագիծը կարող է հասնել մինչև 7-8մ: Պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ ընկույզենու տակ ոչինչ չի աճում: Աշնանային տերևաթափի ժամանակ ծառն արտադրում է հատուկ նյութեր, որն արգելակում է մյուս ծառերի արմատային համակարգի աճը: Այդ պատճառով ընկուզենու տակ կարող են աճել միայն այնպիսի բույսեր, ինչպիսիք են բաղեղը: Ընկույզենի տնկելու ամենալավ շրջանն է համարվում գարունը, քանի որ ծառն առաջին ցրտից հետո կարող է լավ արմատակալվել: Ընկուզենին շատ խնամք չի պահանջում, երիտասարդ ծառերը

պետք է գարնանը 2լ պարարտանյութ ստանան յուրաքանչյուր մ² համար:

- սկզնական շրջանում պետք է տարածքը մաքրել մոլախոտերից, քանի որ նրանք խանգարում են ծառին սնուցիչներ ստանալիս
- անսպասելի ցրտի դեպքում պետք է երիտասարդ ծառերը ծածկել
- մուլչացումն օգնում է անհրաժեշտ խոնավության կարգավորման գործում

Ինչպե՞ս ճիշտ էտել ընկուզենու ճյուղերը

Այլ մրգատու ծառերի հետ համեմատած ընկուզենին շատ զգայուն կերպով է արձագանքում կտրատմանը: Ընկուզենու կտրատման ամենանպաստավոր ժամանակն է համարվում հուլիս ամսից մինչև սեպտեմբերի կեսն ընկած ժամանակահատվածը: Եթե ծառը կտրատում են վաղ գարնանը, ապա ծառը երկար ժամանակ թաց է մնում, ինչը բացասական է ազդում աճի վրա: Կտրատում են նաև կողմնակի ճյուղերը, որոնք այնքան հաստ են, ինչքան ծառի բունը: Որպես կանոն կոները չորանում են և ժամանակի ընթացքում կազմում թույլ ճյուղեր:

- պետք է օգտագործել միայն սուր և մաքուր գործիքներ, որպեսզի ծառի ճյուղերը չվնասվեն
- կտրատված հատվածը խնամել հատուկ պաշտպանական միջոցներով

կտրատումից անմիջապես հետո անհրաժեշտ է մաքրել բոլոր գործիքները, ինչպես նաև լվանալ ձեռքերը, քանի որ տերևները և կեղևը պարունակում են յոդի քանակություն

Բերքատվություն

Աշնանը ընկուզենին տալիս է մինչև 65-100կգ բերք: Պետք է մի փոքր համբերել, մինչև ընկույզի թափվելը: Նրանք իսկապես հասունանում են միայն այն ժամանակ, երբ կանաչ, հաստ արտաքին պատյանը բացվում է: Կանաչ ընկույզները քաշել կամ հարվածել չի կարելի:

Բազմացում

Սերմերի բազմացումը և տարածումը բնական ճանապարհով իրականացվում է տարբեր թռչնատեսակների, սկյուռների կամ այլ կրծողների միջոցով: Օրինակ սկյուռները ընկույզը պահում են որպես ձմռան պաշար և հետո չեն կարողանում գտնել այն: Եթե ընկույզը շատ խորն է թաքցրած այն սկսում է բողբոջել և բազմանալ: Սերմերից աճած ծառերի մոտ պտղատվության շրջանը հիմնականում ուշ է սկսվում, աճում է արագ և որպես կանոն տալիս է համեմատաբար փոքր չափի պտուղ:

Օգտագործում

Ընկույզներն օգտագործում են խմորեղենի, թխվածքաբլիթի, պաղպաղակի, մուրաբայի և այլ տարատեսակ ուտելիքներ պատրաստելիս: Արժեքավոր է ընկուզենու ամուր, լավ հղկված բնափայտը, որը կիրառվում է ատաղձագործության և շինարարության մեջ՝ բարձրորակ կահույք և այլ արտադրանք պատրաստելու համար: Ընկուզենին օգտագործվում է նաև անտառապատման և կանաչապատման նպատակներով:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Սույն Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):